«ԲԱԶՄԱՎԷՊ»
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒ ՆԱՀԱՊԵՏԸ
(150-ամյա հոբելյանին առթիվ)

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ ԼԵՎՈՆ ԶԵՔԻՅԱՆ (Վենետիկ)

Թե ինչպիսի բացառիկ երևույթ է պարբերական մամուլի կյանքին մեջ բոլորիլ 150-ամյա անընդմեջ հանգրվան մը, լավագույնս կարելի է գնահատել սա փաստով՝ որ «Բազմավեպը» հնագույնն է Իտալիա հրատարակվող պարբերաթերթերու միջև, անընդհատորեն լույս տեսած՝ իր հիմնարկության թվականեն, 1843-են սկսյալ, և չորրորդը՝ աշխարհի հնագույն պարբերականներու կարգին։

Ավելորդ է ավելցնել բառեր, մեկնաբանություններ, ընդգծելու համար նման մի երևույթի մատնանշած կենսունակությունը և կարևորությունը՝ հավաքականության մը կյանքին մեջ։

Մխիթարյան Միաբանությունը նշեց 14—17 սեպտեմբեր 1994-ին «Բազմավեպի» 150-ամյա հոբելյանը։ Այդ հոբելյանին չի կրնար անմասն մնալ հայագիտական աշխարհը, թեկուզ հեռուեն և մեծ մասամբ, ըստ երևույթին, ոչ ուղղակիորեն ներգրավված հիշյալ տոնակատարության մեջ։ Արդարև, «Բազմավեպը» հասարակաց ավանդը, հասարակաց ժառանգությունը, հասարակաց հարստությունն է ընդհանուր հայագիտության։

Գնահատանքի, երախտագիտության, բարեմաղթության վառ իղձերով է, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի օրգան «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը և գիտաշխատակցական կազմը ոգևին կմասնակցին ու կշնորհավորեն սույն հանդեսի երեց և անդրանիկ եղբոր, հայագիտական հանդեսներու և առհասարակ հայ մամուլի կենդանի նահապետ «Բազմավեպի» մեկ և կես դարյան կրկնորեն ադամանդյա հոբելյանը։

Ինչպես ամեն մեծ գործ, որ ժամանակի մեջ ակոսներ կբանա, «Բազմավեպն» ալ մտքի երկունքն է երկու արծվեհայաց, տեսլապաշտ հոգիներու, երկու մխիթարաշունչ վարդապետներու՝ հ. Գաբրիել Այվազովսկիի և հ. Ղևոնդ Ալիշանի։ Վերջինս վերակոչված՝ ինք ևս Նահապետ, նկատված՝ հայ ռոմանթիկներու ռահվիրան, «ինքնին մի ակադեմիա»՝ իր պատմա-տեղագրական կոթողային երկերով, յուրովի անհասանելի մի բարձունք, որ վերջին գագաթն է, հավերժացման կնիքը այն բազմաբեղուն ժամանակամիջոցին՝ զոր Լեո կոչած է «Մխիթարյան դար». միանգամայն ներշնչումի աղբյուրը՝ ուղղակի կամ անուղղակիորեն կրտսեր սերունդներու անհամար ներկայացուցիչներու, որոնք տեսան իր մեջ մասիսատիպ Նահապետը՝ «ալևոր, անմահ, հսկա, մենասեր»։ Իսկ առաջինը՝ հ. Գաբրիել Այվազովսկի, երեց եղբայրը մեծ Նկարչին, պաշտված՝ Այիշանե գերդ հոգեսնունդ վարդապետ, հուսկ բաժնված՝ Մխիթարյան Միաբանութենեն, անտարակույս անչափս երախտավոր և անմոռանալի դեմքերեն մեկը մեր մշակույթին, որ եթե չունենար իսկ այլ որևէ արժանիք, պիտի բավեր միայն «Բազմավեպի» առաջնորդ հիմնադրի հանգամանքը՝ դասելու համար զինք հավետ մեր անմահներու հույլը։

«Բազմավեպ» անունն իսկ, գուցե որոշ չափով արտասովոր հնչող ժամանակակիցներուս ականջին, կհայտնանշե՝ պատմական տվյալ ժամանա-

կաշրջանի մը յուրատիպ դրոշմով՝ մշակութային-գիտահետազոտական-ժողովրդակրթական մի բովանդակ ծրագիր։ «Բազմավեպ» եզրը կպատճենե հունական «պոլիհիստորը», որ ընտել հղացք մը կարտահայտեր ԺԸ—ԺԹ դարերու Նոր-դասականության մթնոլորտում։ «Վեպ», «հիստորիա» դասական առումով իբր հետազոտության, ուսումնասիրության, քննության, հայեցողության, ուսուցման նյութ կամ առարկա։ Մինչ «բազումը», «պոլին», ուղղակի կկապվեր Նոր-դասականության հումանիստական հուներուն. աշխարհայացք՝ որ գիտության, ուսման, մշակույթի կորիզը, կեդրոնն ու վախճանը կնկատեր մարդը, իր էության տարածքներուն, բնազանցական ու կենցաղային բաղկարարներուն, ամեն տեսակի հարցադրումներուն և պահանջներուն բազմակողմանի, համընդգրկիչ ընկալումով։

Փաստորեն «Բազմավեպը» ամենահավաստի վկաներեն մեկն է Մխիթարյան հումանիզմին։ Հումանիզմ՝ ներշնչված անշուշտ եվրոպական մայր հումանիզմեն, հատկապես ասոր իտալական ակերեն ու ֆրանսական երփնավորումներեն, բայց և խորապես արմատացած՝ հայ մտքին, հայ հոգիին, «մարդ» եղելության հանդեպ իր բազմադարյան ընդերքեն բխող ուրույն մերձեցման, յուրահատուկ զգայնության արգավանդ հողին մեջ։ Հումանիզմ՝ որ կհայի կյանքին հայ ժողովուրդն ու մշակույթը տասնյոթ դարերու տևողությամբ ներքնապես թրծած, բնորոշած, կողմնորոշած քրիստոնեական հավատքին լույսով։ Հումանիզմ՝ որ 1843-ին «Բազմավեպի» հիմնարկման տարին, լրիվ արտահայտված էր արդեն լեզվական, պատմագրական, հին և նոր դասականներու թարգմանության, հնագիտական, ազգագրական, բանասիրական, աստվածաբանական, մեկնողաբանական, վկայաբանական, հայրախոսական և ազգային մշակույթի հարակից և այլևայլ մարզերուն մեջ, իր կրոնական և աշխարհիկ զույգ տարածքներով, թե՛ գիտական և թե՛ կրթալուսավորչական բնույթի հսկա գործունեությամբ և համապատասխան պատկառելի արտադրությամբ։ Բավ է հիշել միայն՝ ավելի քան անկյունադարձային, դարադարձային տարողությամբ գործերեն մի քանի անուն, ինչպիսին են նախ Մխիթարի և ապա՝ Երից Վարդապետաց «Հայկազյանները», Չամչյանի եռահատոր Պատմությունը, Ինճիճյանի «Հնախոսությունը», Զոհրապի Աստվածաշունչը, Մխիթարի, Չամչյանի, Ավետիքյանի Մեկնությունները, Ավդերյանի Վկայաբանությունը և վերաթարգմանությունները բնագիրը կորսված հին հայկական թարգմանություններու, Թովմաճյանի, Հյուրմյուզներու, Բագրատունիի դասականներու թարգմանությունները։

Արտադրություն, որու քանակն ու որակը պատկառանք ազդած է մինչև իսկ Նապոլեոնի նման աշխարհակալի մը։ Հյուսիսային Իտալիո տարածքին բռնագրավումի ենթարկելի բոլոր վանքերու և կրոնական հաստատություններու միջև՝ միայն Ս. Ղազարն է զերծ մնացած կայսերական վճռին անողոք կիրարկումեն, շնորհիվ իր գիտական ավանդին և ճանաչումովը ասոր ակադեմական որակին։

«Բազմավեպ» իր առաջին քայլերը կկատարեր, սակայն, ոչ թե իբր գիտական, այլ ավելի՝ հայագիտական հանդես։ «Բազմավեպի» առաջին թիվին ծրագրային «Հառաջաբանը» զայն կբնորոշեր իբր «օրագիր կամ լրագիր», ոչ մերօրյա իմաստով իբր օրաթերթ, այլ իբր ժողովածու գրվածքներու՝ որոնց «մեծ օգուտը ան է որ հասարակ ժողովուրդն ալ քիչ ատենի մեջ ու առանց աշխատանքի, մանավանդ թե զվարճանալով կսորվի իմաստուն մարդիկներուն կամ ընկերություններուն գիտցածը... որով ուսմունքը հասարակաց բան մը կըլլա ամենուն, ու ամենքն ալ անոր պտուղները կվայելեն» (հ. Ա, 1843, էջ 3)։ Ավելի հստակորեն դժվար էր արտահայտել «Բազմավեպի» սկզբնական հղացքին ժողովրդակրթական բնույթը։ Հանգամանք՝ որ նույնպես բացահայտորեն կշեշտվի առաջին ծրագրային եռամյակի բոլորման հաշվեկշռային հանդրվանին. «Բազմավեպը ամենուն համար է, այսինքն թե՛ տգիտաց և թե՛ իմաստնոց համար, բայց ավելի առաջիններուն համար» (հ. Դ, 1845, էջ 4)։

«Բազմավեպի» բովանդակությունն ալ այդ դեռ գրեթե սաղմնային շրջանին կհասապատասխաներ լրիվ առաջադրված նպատակին. «Համառոտ՝ պարզ ու դվարճալի ոճով հասկրցնե մեր ազգին, թե հիմա Եվրոպային մեջ որչափ ե ինչ կերպով առաջ կերթան ամեն տեսակ ուսմունքը, ինչ նոր գյուտերով ծաղկած են արհեստները, ինչ օգտակար տեղեկություններ կան աշխարհիս այլեայլ տեղերուն ու բնակիչներուն վրա, ինչ ստույգ փորձերով հաստատված դիտելիքներ կան տնտեսության վրա, կամ մարդուս կրթության ու առողջությանը վրա» (հ. Ա, էջ 4)։

Սույն նշավակներով «Բազմավեպ» կսկսի լույս տեսնել իբր երկշաբաթաթերթ, ունենալով նյութերու երեք ոյխավոր բաժանում. Ա. Բնական գիտություններ (բնագիտություն, բնալուծություն, աստղաբաշխություն, բնական պատմություն, երկրագործություն ու հանքաբանություն)։ Բ. Տնտեսական (ընդհանուր տնտեսություն, որով «մարդս կսորվի թե իր քաղաքական կյանքը ինչպես պիտի անցընե, կամ թե ինչ կերպով երջանիկ պիտի ընե թե՛ ինքզինքը և թե՛ իր ընտանիքը» (անդ, էջ 5), գյուղական տնտեսություն, տնական տնտեսություն։ Գ. Բանասիրական տեղեկություն, որով՝ «կսորվի մարդ երևելի ճամբորդներուն տեսած ու ստորագրած վայրերը, հիմակվան տերություններուն վիճակը, բնակիչներուն թիվը, և այլն... Բանասեր մարդը պատմական տեղեկություններ ալ կդտնա աս օրագրիս մեջ, մանավանդ մեր օրերուն հետաքրքրական ու խելք սորվելու դիպվածները» (անդ)։

Ակներև է, որ «բանասիրություն» գաղափարը դեռ կպահե «Բազմավեպի» հիմնադիրներուն մոտ իր նախնական իմաստը, բավական տարբեր՝ ԺԹ դարու երկրորդ կեսին, հատկապես գերման ուսումնական միջավայրին մեջ, հղացքին ստանալիք նոր իմացումներեն։ Նմանապես տնտեսականության գաղափարն ալ ունի ավելի նախնական դրոշմ՝ բաղդատմամբ ԺԹ դարու երկրորդ կեսին հատուկ իմաստաբանական զարգացումներուն։

«Բազմավեպի» բնութագրված սույն նկարագիրը կհայելանա ճշտիվ անվանթերթի ենթախորագրի մեջ. «Օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելյաց»։ Ենթախորագիր՝ որու յուրաքանչյուր բառը պետք է իմանալ ըստ ժամանակի վերոգրյալ հասկացողություններուն, զգուշանալով ժամանակավրեպ վերագրումներե ու մեկնություններե։ «Բազմավեպի» հիմնադիր երկու մեծ գիտնականներն ալ գործնական ուշագրավ հասունություն, իրատեսություն և իրավ գիտնականի վայել համեստություն կցուցաբերեն իրենց մշակած ժողովրդակրթական ծրագրով։ Այդ իրատեսության, հասունության, համեստության, այլ և լրջության վկան է նաև իրենց կողմե առաջադրված եռամյա ծրագրավորումի գործելակերպը, որ կտևե շուրջ քսան տարի, մինչև 1861, երբ ծրագրավորումի փուլերը փոխանակ թուլանալու, ևս ավելի կթավուհարին ու կգառնան տարեկան։

Երկրորդ եռամյակի թևակոխումով «Բազմավեպ» թեթևորեն կփոխե իր ենթախորագիրը, որ կըլլա՝ «օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական և բնական գիտելյաց»։ Նորություն է «բարոյական» բնութագրումը, մինչ իրարու տեղերը կփոխանակեն բնական և բանասիրական գիտելիքները։ Տընտեսականը կպահե իր միջանկյալ դիրքը վերջին երկուքին նկատմամբ։ Նշանակալից փոփոխություն, որ կդրսևորե ուղղակի մարդուն վերաբերող գիտելիքներու առաջնահերթությունը և գերակշռումը բաղդատմամբ բնական գիտելիքներու։ Գրեթե հեղափոխում մը՝ առաջին երեք տարիներուն նկատմամբ, որ պիտի դրոշմե իր կնիքը «Բազմավեպի» հաջորդ բոլոր զարգացումներուն վրա. ասոնք պիտի ընթանան միշտ ավելի շեշտակիորեն հասարակական, ազգային և հուսկ զուտ հայագիտական ուղեգիծերով։

1850 թվականին «Բանասիրական տեղեկություն-Ազգային տեղեկություն» զույգ խորագրին ներքև լույս կտեսնե թերևս առաջին գրությունը, երկարաշունչ, զոր Խարելի ոլլա որակել իբր բանասիրություն՝ նաև գրեթե մերօրյա առումով։ Վերնագիրն է՝ «Անի քաղաքին մեջ եղած եկեղեցվո մը լու-

սամուտին վրայի դիրերուն մեկնությունը», ստորագրված Նիկողոս Հովվյանե (հ. Ը, էջ 21—28)։

1852-ին, թեակոխելով տասներորդ տարին, «Բազմավեպ» կդառնա ամսագիր և իբր այդ պիտի շարունակե բավական տարիներ։ Ամսագրի վերածումը պետք է վերծանել իբր նշան ոչ թե որևէ տկարացման գործընթացի, այլ ընդհակառակն ներքին, օրգանական զարգացումի՝ որ «Բազմավեպը» պիտի առաջնորդե հաջորդող քսանամյակի ընթացքին փոխակերպվելու «օրագիրե» «հանդիսարանի», պաշտոնական խորագրափոխությամբ առաջին երեք տասնամյակի լրումին՝ ԼԱ հատորի առաջին եռամսյա պրակով։

Այնպիսին է, հրատարակիչներուն համար, սույն փոխակերպման տարողությունը, որ ԼԱ հատորի ճակատին գրված է՝ իբր երկրորդ ենթախորագիր՝ «Նոր շար. Առաջին տարի»։ «Բազմավեպ» կսկսի նոր, կարելի է ըսել, շատ նոր շրջան մը։ Բայց, ինչպես նախապես, անգամ մը ևս մեծ կհայտնվի հրատարակիչներու իմաստությունն ու հեռատեսությունը. կպահեն հատորներու ընդհանուր համարակալության շարունակականությունը։ Թեև նոր առաջադրանքներով ու բովանդակությամբ, «Բազմավեպ», հեռու ամեն տեսակ երերուն քմայքներե, նորութարարային մղձավանջե, կմնա խորապես գիտակից իր ներքին խորագույն, հիմնական միավորության, հայ ժողովուրդի ու մշակույթի ծոցին մեջ իր դերին էական միության, ու կարծես՝ գալիք սերունդներու համար «Նահապետ»-ի իր վեհադրոշմ կոչումին։

Թե ինչ նշանակած է խմբագրության համար «օրագիրե» վերափոխումը դեպի «հանդիսարան», «Բազմավեպի» այդ առաջին տասնամյակներու ոճին հատուկ հստակությամբ և գործարար համեստությամբ բացատրված է ԼԱ հատորի նախաբանին մեջ, որ փոխանակ կրելու սովորականացած «հառաջաբան» խորագիրը՝ շատ ճահորեն վերնագրված է «Հին և Նոր»։

Հատու՝ որքան դիպուկ հարցադրում մը կբանա ուղին դեպի որոնումը տեղի ունեցող փոխակերպման իմաստին. «Արդյոք լուսավոր շրջա՞ն էր կատարածը»։ Պատասխանն էր նույնքան անսեթևեթ, զուսպ, և դեպի նոր հորիզոններ սևեռուն. «Առ այս մեզ այսչափ ի ճահ է ըսել թե չծածկեց զլոյս. այլ եթե չափավորեց թերևս երբեմն առ ի չխրտտրղել մտաց աչքերը, չափավորել ըլլալով նաև ըստ սահմանի յուր ծրագրին, ըստ զանազան նկատմանց ժամանակին և յուր ընթերցողացը, այժմ հետ երից տասաց ի չորրորդն միջամուխ ըլլալուն՝ մեծագույն պարտք և պատիվ կհամարի իրեն և ազգին... չթողլով կամ չկարենալով թողուլ ի բաց ըստ ամենայնի յուր բռնած ոճը, կփափաքի նոր ժամանակիս ուսումնաթերթից ոճույն ալ հետևիլ իվիք իվիք, և իբրև լավագույն թանգարան կամ հանդիսարան մը ընել հին և նոր կարեվոր գիտելյաց» (հ. ԼԱ, 1873, էջ 5—6)։ Մեկ խոսքով՝ «օրագիրե» դեպի «հանդիսարան» անցքը նշանակած է, մերօրյա ասացվածքով, ժողովրդական կամ ժողովրդականացման թերթի հանդամանքեն անցնիլ դեպի ուսումնագիտական կամ ուսումնասիրական թերթի հանգամանքը, թեպետև ոչ տարամերժորեն։ Ստուգիվ, հայտնի է մեջ բերված տողերեն՝ թե «Բազմավեպ» մտադիր չէ իր նախկին ընթացքեն բոլորովին հեռանալու։ Այլ խոսքով՝ կուզե հաշտեցնել մեկ կողմե բարձրորակ ժողովրդականացման, մյուս կողմե ուսումնասիրական հանդեսի պահանջները։ Առաջադրանք՝ զոր «Բազմավեպ» հաջողապես պիտի մշակե դեռ շուրջ քսան տարիներ ևս, բայց կարելի է ըսել՝ նաև բովանդակ ԺԹ դարու երկայնքին և նույնիսկ մինչև մեր դարու 20-ական թվականները, այլ խոսքով՝ մինչև Մեծ Եղեռնի ավերիչ ցունցը վերապրող սերունդի ազգային-մշակութային ավանդներուն և զարգացման մակարդակին։

Հարմար վայրը չէ այստեղ նկրտելու սույն հաջողության գաղտնիքներուն, մեթոդաբանության և ընթացակերպերուն վերլուծմանը մեջ։ Կարելի է, սակայն, անվարան հաստատել՝ թե այդ հաջողությունը կենթադրե և արդյունք է նախ և առաջ գիտության և ժողովրդականացման միջև կամրջելու ավանդականացած մի արտակարգ կարողության։ Եթե խորհինք որ «Բազմավեպի» զույգ հիմնադիրները, բայց մանավանդ մինչև հետին շունչը «Բազ-

մավեպի» ոգին, ուղեղը, ուղղակի կամ անուղղակիորեն զայն վարող, առաջնորդող ձեռքը հանդիսացող հ. Ղևոնդ Ալիշան, բացառիկ անձնավորումներ էին կամրջումի այդպիսի կարողության, և ունեին մանավանդ խորագույն ծանոթություն՝ սշակված դիտելիքին չափ նաև իրենց ժողովուրդին հոգեբանության, մասյնության, կենցաղին ու կարիքներուն, մեծ մասամբ արդեն կսկսինք վերահասու դառնալ կամ գեթ հայտնատեսորեն նշմարել խնդրո առարկա հաջողության գլխավոր գաղտնիքը։ Անշուշտ պետք չէ մոռնալ նաև ժամանակներու հանգամանքները, հատկապես ԺԹ դարու տևողությամբ, երբ գիտական հետազոտության և նույնին ժողովրդականացման կամ ծավալման միանգամայն ծառայող ուսումնաթերթեր շատ ավելի սովորական և հաճախակի երևույթ էին քան հետագային։

Սակայն վերադառնանք պահ մը «Բազմավեպի» փոխակերպումին «օրադիրե» դեպի «հանդիսարան»։ Դա որակական ոստում մըն է անկասկած, բայց շատ նման բնության «ոստումներուն», որոնք արդյունք են, գրեթե վերջնական հավաստիացման մը ձևով, անընդհատ զարգացումներու կամ հեղաշրջումներու՝ որոնց հագեցման աստիճանը կորոշադրե փոխակերպիչ ոստումը։ Արդարև, դեռևս 1861-ին, հրատարակիչները վերահաստատելով հանդերձ «Բազմավեպի» ժողովրդականացուցի բնույթը, կնախատեսեն ներմուծելի «փոփոխություններ» մինչ՝ ինչպես ըսվեցավ, թերթին ծրագրավորման փուլերը կվերածվեն տարեկան միավորներու («Հառաջաբան», էջ 4)։ Արդեն 1863-ին կսկսի լույս ընծայվիլ հ. Ներսես Սարգիսյանի «Տեղագրություն» երկար հոդվածաշարքը, որ հետո պիտի վերածվի միևնույն վերնագրով հանրածանոթ դիրքին։ Այսպես ուսումնասիրական նման մակարդակի մը ներկայությունը «Բազմավեպի» հաջորդող պրակներուն մեջ կստանա մնայնության երաշխիք։

1863-ին ականատես կդառնանք, սակայն, թերթի բնութագրումին տեսակետեն գուցե ևս ավելի նշանակալից նորության մը։ Այդ տարվան ԻԱ հատորեն սկսյալ, «Բազմավեպ» անունին կընկերակցի «օրագիր Ազգային, Բարոյական և Բանասիրական» խորագիրը։ «Բազմավեպի» ճակատին «ազգայինի» այս ընդգծումը կվերաբերի անշուշտ ոչ թե թերթին նպատակադրրման, որ էր լրիվ ազգային ի սկզբանե հետե, այլ բովանդակության, որ պիտի ունենար ուրեմն, ազգային երանգ, ազգային ոլորտ և խորք իր նյութերուն, այսինքն, «բարոյական» և «բանասիրական» նյութերու մերձեցմանը, հարցադրմանը, քննարկմանը մեջ։ Այլ խոսքով, «ազգային» վերադիրին հարաբերությունը հաջորդող երկու վերադիրներուն ոչ այնքան համադասային է՝ որքան ստորադասային. այսինքն՝ «ազգայինն» է, ազգային ոգին, դիտելակերպը, շահագրգռությունները, մերձեցման ու շոշափման եղանակները, որ կբնորոշե «Բարոյականին» ու «Բանասիրականին» տարողությունը, ընդգրկումը, հանգամանքները։ Իսկ «Բնականն» ու «Տնտեսականը» արդեն իսկ ցնցված են խորարեն։ Փաստորեն «Բազմավեպ» պիտի չփակե իր էջերը նմանատիպ նյութերու առջև. բայց ասոնք պիտի չունենան այլևս այն կշիռը՝ ինչ որ ունեին նախապես։

Նման հեղաշրջում մը՝ կկարծենք թե արդյունք էր ոչ այնքան «Բազմավեպի» և առհասարակ Մխիթարյան Միաբանության ազգային ղերին նկատմամբ նոր անդրադարձության մը, որքան՝ նույնինքն մեր ազգային հասարակայնության անցնող քսան տարիներու ընթացքին արձանագրած հեղաշրջումներուն, որոնցմով հայերը դուրս կցայտեին արևելյան ազդերու միջև իրենց արագ քայլարկումներով՝ համապատասխան Եվրոպայեն ճառագայթող գիտական և այլ կարգի հառաջադիմության, ինչպես դիտել կուտային դեռ իսկ 1843-ին «Բազմավեպի» հիմնադիրները իրենց անդրանիկ ուղերձով (հ. Ա, էջ 3)։ Մխիթարյանները, որոնք չէին վարանած ձեռնարկելու նույնիսկ «Բազմավեպեն» շատ առաջ, ժողովրդական կրթության համապարփակ ծրագրի մը մշակման—որ կրնդգրկեր մեղվաբուծութենե հաշվապահություն, նավուղղությունե երկրագործություն, համաչափ քայլերով ժողովուրդի մակար-

դակին բարձրացման նման մարզերու մեջ՝ կձգտեին իրենց գործունեությունը միշտ ավելի կեգրոնացնել ազգին կրթության ու դաստիարակության այն հարցերուն շուրջ, որոնք առավելաբար կհամընկնեին հոգևոր մշակույթի նվիրյալներու իրենց բուն կոչումին։

1873-են մինչև 1889 երկարող տասնյոթամյա շրջանը, որու հատորները կկրեն «նոր շար» ենթախորագիրը, կարելի է նկատել իբր անցման և մանավանդ հասունացման ժամանակամիջոց մը՝ երբ վերջնականորեն կհաստատվի «Բազմավեպի» «ազգային» և գերակշռորեն ուսումնասիրական բնույթը։ 1889-ի խէ հատորին «Զեկուցումն առ վերծանողս» խորագրված հառաջաբանը կկանոնականացնե այս պարագան՝ տալով նաև «ազգայինի» բովանդակային իմացումին հակիրճ, բայց հստակ ու մասնավորյալ պատկերացումը (էջ 3—5)։ Եռամսյա պրակը վերստին կդառնա ամսօրյա ու «Բազմավեպի» կողքին կգտնենք սոսկ «Հանդիսարան ամսաթերթ» ենթախորագիրը։ Տիտղոսաթերթին որակումներուն այս վերածումն ալ տվյալ պատմական համագրին մեջ, թեպետև հաջորդաբար պիտի ունենանք դարձյալ ենթախորագրի նոր ընդլայնումներ, նշան է կարծես այն համոզման՝ թե «Բազմավեպի» դերն ու բնույթը պետք է հստակորեն ծանոթ ըլլան արդեն ընթերցողներու և առհասարակ ազգային հանրության։

ԺԹ դարու վերջին և Ի դարու առաջին քսանամյակները կնշեն միանգամայն, Վենետիկյան բանասիրական դպրոցին ականավոր անուններու վաստակը «Բազմավեպի» էջերուն մեջ։ ՀՀ. Բարսեղ Սարգիսյանի, Աթանաս Տիրոյանի, Հովհաննես Թորոսյանի, Սուքիաս Էփրիկյանի, Վարդան Հացունիի, Հովհան Ավգերի, Քերովբե Զրաքյանի և ուրիշներու լուրջ աշխատանքները, բնագրային քննություններն ու հրատարակությունները լրիվ կարդարացնեն «Բազմավեպի» ուսումնագիտական առաջադրանքները։ Ի տարբերություն իր կրտսեր եղբայր «Հանդես Ամսօրյայե» «Բազմավեպ» այս շրջանիս ի հայտ կուգա նաև գրական-գեղարվեստական ճոխ ու բարձրորակ բովանդակությամբ՝ վերլուծումներովը, թարգմանություններովը, հեղինակություններով ՀՀ. Ներսեհ Անդրիկյանի, Ղուկաս Բժիկյանի, Կարապետ Տեր-Սահակյանի, Սիմոն Երեմյանի, Արսեն Ղաչիկյանի նման գրիչներու։

1920-ական թվականներեն ասդին այս անուններուն պիտի զուգորդի և հաջորդե անոնց նոր սերունդի հույլը, ուր պիտի դրսևորին հատկապես գրականագետ Հ. Կյուրեղ Քիպարյան, գրաբարագետ Հ. Եղիա Փեչիկյան, բանաստեղծ Հ. Վահան Հովհաննեսյան, բանասեր Հ. Գրիգոր Սարգսյան։ Այդ նույն տարիներուն «Բազմավեպ» ավելի լայնորեն պիտի բանա իր էջերը ոչ մխիթարյան և օտար հայագետներու ալ աշխատանքներուն։ Այս երևույթը առավելաբար պիտի շեշտվի անցյալ վերջին քսանհինգամյակի ընթացքին։ Հիշենք ասոց միջև մի քանի անուն, որոնց աշխատակցությունը «Բազմավեպի» մնայուն կամ գրեթե այդպիսի հանգամանք ունեցած է, ինչպես Almo Zanolli, Frederic Feydit, Giuseppe Frasson, Շուշանիկ Նազարյան, մինչ անհամեմատորեն ավելի է ընդհատաբար կամ ցանցառաբար աշխատակցողներու թիվը։

1920-ական թվականներեն սկսյալ «Բազմավեպ» կդառնա գրեթե զուտ ուսումնասիրական հանդես, թեև ոչ տակավին՝ սոսկ հայագիտական։ Կրսենք՝ գրեթե զուտ, քանի որ դեթ «Ազգային արձագանք» սյունակը, սույն կամ նմանատիպ անուններով խորագրված, պիտի շարունակե դեռ երկար տարիներ «Բազմավեպի» հնագույն «ժողովրդական» ավանդությունը՝ մինչև վերածումը սոսկ հայագիտական հանդեսի։ Այս վերջին քայլը տեղի պիտի ունենա բավական ուշ, փաստորեն 1971 թվականին՝ ՃԻԹ հատորով կատարվելիք ուժեղ փոխակերպումով, որ պիտի զգացվի բացի բովանդակային նոր ուղղվածություններեն՝ նաև թերթին նույնինքն արտաքին հանդերձանքին ու ձևավորման մեջ, ինչպես և ստանալիք նոր ենթախորագրով՝ «հայագիտական հանդես» (Revue d'Etudes Arméniennes)։ Այս փոխակերպումին մեծ ջատագովն ու իրագործողը կհանդիսանա «Բազմավեպի» երկարամյա խմբա-

գրապետ և առհասարակ հայ գրականության և արվեստաբանության բազմավաստակ երախտավոր, Ս. Ղազարու երկհարյուրամյա, այժմ հանգած տպարանին անխոնջ տնօրեն՝ հ. Մեսրոպ Ճանաշյան (1908—1974)։

Դրականագետ հ. Մեսրոպ Ճանաշյանի կողքին 1950-ական թվականներեն սկսյալ «Բազմավէպի» էջերը պիտի զարդարեն նաև մեկ աստիճան կըրտսեր սերունդի ներկայացուցիչներ, որոնց միջև պիտի ցայտեն հատկապես բանաստեղծ և հիմնական աստվածաբանության մասնագետ հ. Եփրեմ Տեր-Ղազարյան (+1994), քերականագետ և աստվածաբանության պատմաբան հ. Ներսես Տեր-Ներսեսյան, որ երկար տարիներ պիտի վարե նաև խմբագրապետի պաշտոնը, բայց մանավանդ հ. Պողոս Անանյան, որու անկյունադարձային հոդվածները, առհասարակ Հայ եկեղեցվո պատմության, հատկապես նախագրիդորյան քրիստոնեության, Հայոց պաշտոնական դարձին, Գրոց գյուտին, Արտաշատի, Դվինի Բ, Շիրակավանի ժողովներուն, վիճված բնագրական հարցերու վերաբերյալ, ինչպես նաև բնագրային հրատարակություններն ու թարգմանությունները կպատկանին անկասկած վերջին հիսնամյակի մեր բանասիրության ամենավավեր արտադրություններու կարգին։ Առավելաբար 60-ական թվականներեն ասդին ասպարեզ պիտի իջնե նաև երիցայուն սերունդի անգամ Կարապետ եպս. Ամատունի, Վատիկանի Հավատո Տարածման ժողովի („Congregatio de Propaganda Fide") դիվաններուն մեջ երկար տարիներու տքնաջան աշխատանքի արդյունք իր հմտալից հոդվածներով, թեև մերթ փոթորկահույզ և ոչ միշտ զերծ՝ հեղինակին միտքը, հատկապես դիտավորությունները, թյուրիմացության մատնելու ամեն վտանգե։ Այս առնչությամբ թույլ տրվի մեզի այստեղ արձանագրել պատմության համար, որ Ոսկան վրդ. Երևանցիի մասին ուսումնասիրության հարուցած վրդովման շրջանին, նույնինքն հեղինակին և Միաբանության այդ ժամանակներու Աբբահայր Գեր. հ. Պողոս վրդ. Անանյանի փափաքով ստորագրյալիս կողմե երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառի տրված բացատրությունները, 1981-ի հոկտեմբերին, գոհունակությամբ ընդունվեր էին Ամենայն Հայոց հոգեյույս Հայրապետին կողմե։

Վերջին երկու տասնամյակի ընթացքին, միաբաններու միջև «Բազմավէպ»-ի հավատարմագույն աշխատակիցը հանդիսացած է հ. Պողոս Անանյանի կողքին ներկա միջին սերունդի ներկայացուցիչ հ. Սահակ Ճեմճեմյան՝ քանակապես նշելի վաստակով։

«Բազմավէպ» կշարունակե ուրեմն իր դարավոր ուղին, ի սփոփանս և ի հրճվանս հայ մշակույթի, նամանավանդ հայագիտության «ուխտի մանկանց»։ 1993-ի 150-ամյակի հոբելյանական հատորը իր ճոխ և բազմակողմանի բովանդակությամբ պերճորեն կվկայե այս փաստին։

Նկատի ունենալով «Բազմավէպի» բացառիկ դիրքը իբր «նահապետ», անոր ավանդական նվիրականացած թծախնդրությունը այն ամեն բանի նկատմամբ՝ որ հրատարակության մը ներքին և արտաքին արժանիքները կկազմեն, կմաղթենք ի սրտե, որ նույն ոգիով և տկզբունքներով շարունակե «Բազմավեպ» իր ընթացքը, ի հեճուկս վերջին տարիներու հատուկ ինչ-ինչ երևույթներու, նյութերու ընտրության անզիջող խստապահանջությամբ, Մեծասքանչի և մեսրոպյան ուղղագրության հանդեպ Մխիթարյան ավանդության անդրդվելի հավատարմությամբ, հնչադարձային ու տառադարձային համակարգերու բանավոր հետևողականությամբ։

* * *

Կարելի չէ խոսիլ «Բազմավեպի» մասին առանց անդրադառնալու «Բացառիկներուն» և հարակից հրատարակություններուն։

Առաջիններեն՝ հիշենք հատկապես հետևյալները, նվիրված՝ Միաբանության հիմնարկության երկհարյուրամյակին (1901), Մուրատյան և Ռափայելյան վարժարաններու հարյուրամյակին (1936), Մխիթարի մահվան երկրորդ դարադարձին (1949), Մխիթարի ծննդյան երրորդ դարադարձին (1977),

և հուսկ նույնինքն «Բազմավեպի» 150-ամյակին, որոնք մեկ մեկ պատմաբանասիրական հուշարձաններ են՝ գիտելիքներու գրեթե հանրագիտարանային պաշարով։

«Գեղունիներու» շարքը, որ «Բազմավեպի» և առհասարակ Մխիթարյաններու Վենետիկյան դպրոցին նրբորեն ու բարձրորեն գեղարվեստասեր ճաշակին, միտումներուն, կրթամշակութային առաքելության արտահայտությունները են հանդիսացած 1901-են 1950 երկարող տարիներու ընթացքին հրատարակված տասը պրակներով (շարքը կանխող պրակ մը լույս տեսած է 1900-ին, «Որբունի» տիտղոսով), կներկայացնե անկասկած հայ տպագրական արվեստի և գեղարվեստական հրատարակչության Ի գարու առաջին կեսի գագաթնակետը։

1969-ին հրատարակված „Melanges d'Etudes Armenienne" ժողովածուն, հ. Մեսրոպ Ճանաշյանի խմբագրությամբ ու մասամբ «Գեղունին» փոխարինելու լռելյայն դիտումով, կնշեր ոչ թե Վենետիկյան գեղարվեստասեր միտումին վախճանը, այլ կավետեր «Բազմավեպի» երկու տարի հետո կրելիք փոխակերպումը դեպի զուտ հայագիտական հանդես։ Մինչ Մխիթարյան հրատարակչության գեղարվեստասեր ոգին ամենաբարձր որակով հանդես գալու նոր շավիղներ էր արդեն բացած „Melanges"-են երեք տարիներ առաջ, նույնպես հ. Մեսրոպ Ճանաշյանի հերոսական ճիգերով ու խմբագրությամբ լույս ընծայված «Հայ մանրանկարչություն» Ա հատորով, որ դժբախտաբար չունեցավ շարունակություն։

«Բազմավեպի» հարակից վերջին շարքը, որ պիտի ուզեինք հիշել այստեղ «Հայագիտական մատենաշար «Բազմավեպն» է, որ սկսած է լույս տեսնել 1971-ի հիշյալ փոխակերպումով զուտ հայագիտական հանդեսի, հյուրընկալելով «Բազմավեպի» մեջ լույս տեսնող երկար հոդվածաշարքերը։ Թեև քիչ թե շատ պատճենում՝ «Հանդես Ամսօրյայի» բազմարդյուն «Ազգային Մատենադարանին», «Բազմավեպ» մատենաշարն ալ կոչված է անտարակույս, հայագիտական հույժ կարևոր ծառայության մը։ Երանի թե լիներ հնարավոր 1971-ը կանխող համարներեն ընտրովի լույս ընծայել նույն շարքին մեջ հայագիտական բնույթի կարևորագույն հոդվածները, ինչպես կատարվեցավ ջերմորեն ողջունելի մտածումով մը հ. Պողոս Անանյանի եկեղեցապատմական հոդվածներուն համար (շարքի թ. 34 հատորը)։

Փակելե առաջ այս տողերը, երախտիքի մասնավոր տրիտուր մը հարկ է մատուցանել, կխորհինք, հետ վերոհիշյալ Հիմնադիրներուն, «Բազմավեպի» խմբագիրներու և հատկապես ավագ խմբագիրներու երկար շարքին, որոնց վաստակը «Բազմավեպի» համառ ու բեղուն գոյատևման ճանապարհին դրժվարավ գնահատելի է մարդկային սովորական չափանիշերով («Բազմավեպի» հնագույն խմբագիրներու մասին տես՝ հ. Ս. Երեմյան, Բազմավեպ և խմբագիրներն, «Բազմավեպ» Կ, 1902, էջ 201—211)։ Անոնց միջև պիտի ուզեինք, սակայն, առանձնացնել այստեղ հայ եկեղեցական երգի ներհուն մասնագետ ու մեկնաբան հ. Ղևոնդ Տայյանի անունը, որ 1923-ին գրեթե միայնակ ջանքերով լույս ընծայած է 1918-ի ՀԶ հատորը (վրիպումով ՀԵ նշված թերթի ճակատին), որպեսզի «Բազմավեպի» կյանքը ըլլար իսկապես անընդհատ, որով «Բազմավեպ» կարենար պահել իր պատվո տեղը աշխարհի հնագույն հանդեսներու կարգին։

150-ամյա հոբելյանի քողը, որ կիջնե «Բազմավեպ» նահապետի ալեհեր ճակատին, թող դառնա լույսի թափանցիկ շղարշ, ավետելու այգաբացը՝ կրկնապես ադամանդյա նոր դարադարձներու։